



Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն Ք

Ս Ե Ի Ս Ն Կ Ա Մ Ս Ե Ի - Վ Ա Ն Ք

(Շարունակութիւն. Տես էջ 138)



ԱՏՄՈՒԹԻՒՆՆ Կ'աւանդէ մեզ, թէ Ս. Գրիգոր Լուսաւորիչ՝ յետ տարածելոյ Հայաստանի մէջ քրիստոսական հաւատքը, Գեղամայ ընին մէջ գտնուած ամայի և անբեր կղզւոյն վրայ կառուցեր է այս վանքս, նուիրելով և կոչելով զայն յանուն Համբարձման Տեսառն. այս անունս տալու պատճառն՝ կղզւոյս Ձիթե-

նեաց լերան հետ ունեցած նմանութիւնն է. Իսկ Սևվանք անունն՝ նորա սև և թխազոյն տեսքին համար դրուած կ'երևի՝:

Գարբը անցան, և նոցա հետ մէկտեղ փոփոխեցան ևս Հայաստանի իշխողքն՝ մին միւսոյն յաջորդելով այն անդուլ և յարատե պատերազմաց մէջ ընդդէմ մերձակայ ժողովրդոց. մինչև որ վերջապէս բոլորովին նուաճեցին զայն Պարսիկներն և տիրեցին աշխարհին. նոյն ժամանակները բոլորովին կործանեցաւ վանքն, և բնակիչները գերի տարաւ Մրուան զօրապետն: Յետոյ, յամս 874-880, վանացս վիճակն նորէն ծաղկեցաւ, Մաշտոց վանահօր առաջնորդութեան ժամանակ, շնորհիւ բարեպաշտ տիկնոջ Մարեմայ՝ որ դուստր էր Աշոտ Ա թագաւորի: Սոյն մեծահաւատ տիկինս Սիւնեաց Մարիամ՝

1. Ոմանք ուրիշ կերպով կ'աւանդեն այս անուանակոչութեանս պատճառը. իբրու թէ Ս. Լուսաւորիչ՝ յետ կատարելու վանքին շինութիւնը՝ ըսած լինի. Այս-է-վն, ուսկից սպա կոչուեր է Սեան.— Ծ. Թ.:

Թողով զաշխարհ, կ'ապրէր յառանձնութեան Յամաքաբերդ կոչուած միանձնուհեաց մենաստանին մէջ, որ կառուցուած էր լճիս ափանց վրայ՝ հանդէպ Սևանայ կղզւոյն։ Չմայլած կարծես կղզւոյն վայրենի և բանաստեղծական դրիւքն, խորհեցաւ արքայադուստրն կրկին բարձրացընել նախկին աւերեալ տաճարը, զոր և կրցաւ փութով ի գլուխ տանել իւր հօր օգնութեամբ։ կղզւոյն ամենէն աւելի բարձր դրից վրայ շինուեցաւ չափաւոր մեծութեամբ եկեղեցի մի՝ յանուն Սուրբ Աստուածամօր, որ ցարդ ևս կայ։ Նոյնպէս դեռ ևս կանգուն մնացած է նորա մէջ այն փոքրիկ, մթին և անձուկ խցիկն, ուր կ'առանձնանար միանձնուհի արքայադուստրն՝ հրաժարեալ ամենայն աշխարհային ունայնութիւններէ. և անդ իւր առանձնոցին միակ լոյսը կ'ընդունէր՝ դէպ 'ի եկեղեցւոյն մէջ բացուած փոքրիկ պատուհանէ մը, և անտես 'յամենեցունց՝ կը լսէր և կը տեսնէր անտի սրբազան պաշտամունքը և կ'աղօթէր եռանդեամբ առ Աստուած։ Նորա խնամօք կրկին վերականգնեցան բոլոր վանքի շէնքերն և առանձնական խցիկներն, դպրոցն և դրատունն շինուեցան։

Ճամանակաւ կամաց կամաց այս գրատունն մեծցաւ և գրոց թիւն բազմացաւ. ուր կային նաև թանկագին ձեռագիրներ, որ շատ մեծ յարգ ունէին թէ՛ իրենց հնութեամբն և թէ՛ դուզնագիւտ լինելով, զորս աստ կը յղէին ընծայ՝ հարուստ և իշխանագուն անձինք, և նոյն իսկ այլ և այլ վանորայք. վասն զի ապահովագոյն կը համարուէր Սևանայ դիւանատունն 'ի պահեստ տուեալ սրբազան իրաց, թէ տեղոյն ամայութեան և թէ կղզւոյն անմատչելի լինելուն պատճառաւ, որ նոյն ժամանակ պարագած էր հաստատուն՝ բարձր և քարայէն որ մերով, որով և աւելի անկասկածելի և ապահով թշնամեաց 'յարձակմունքներէն, քան թէ այլ վանորայք, որք ամէն ժամանակ ենթակայ էին նորանոր վտանգաց։ Այս պատճառաւ ևս նոյն ժամանակները Հայաստանի բոլոր թանկագին առարկաները բերուեցան 'ի Սևան պահեստի համար։

Անգամ մը Սիմէոն կաթողիկոսն յատուկ ժամանակ մ'որոշեց և լուր սուռա՝ Սևանայ վանքին այցելութեան ելլալու։ Այս կաթողիկոսս շատ գրասէր լինելով՝ ըստ Հայոց վկայագրաց, յորոց և առաջիկայ պատմութիւնս կը քաղենք, ուզեց անձամբ աչքէ անցընել բոլոր այն հնութիւնքը՝ որովք այնչափ հուշակուած էր վանքն, և եթէ կարելի լինէր՝ կը փափաքէր ձեռագրեր ևս փոխ առնուլ իւր առանձին ուսումնական պարագամանց համար։ Վանահայրն լսելով նորա գալուստը՝ սկսաւ պատրաստութիւն տեսնել զանիկայ դիմաւորելու և ընդունելու, և գիտնալով կաթողիկոսին գրասիրութիւնը, ամէն բանէ աւելի ուշագրութիւնը ձեռագրաց վրայ դարձուց։ Այլ ճ՛հ, ցաւալի իր ... այն ձեռագիրներէն շատերն՝ խիտն հին և մաշած երևեցան, ծախեալք ճճիներէն և ժամանակէն, կազմերն բոլորովին քայ.

քայնել, թուղթերն պատառոտեալ և կեղտոտեալ հազարաւոր թեր-
թող և կրկին թերթող ձեռքերէ: Կը գտնուէին անդ վաղեմի աս-
տուածային պաշտամանց գրքեր, Աւետարանք, Սաղմուսարանք, տա-
րեգրական հաւաքածոյք և իմաստասիրական ճառեր: Վախնալով
վանահայրը կաթողիկոսին արդար բարկութենէն, երբ այսպիսի վի-
ճակի մէջ տեսնելու լինէր իրեն յանձնուած այն անգին նշխարներն,
վայրենի և բարբարոս ոգուով մը ներշնչեալ ընտրեց բոլոր գրոց
միջէն նորագոյնը և բարեկազմքը, իսկ մնացեալ հիներն՝ որ և քան
զամէնն թանկագինք էին, հրամայեց խուժա խուժա ծրարել, և գի-
շերային մութը իրեն յարմար առիթ առնելով, նաւակի՛ մէջ դնել և
վանքէն հեռու տեղ մը տանել ... ո՞ գիտէ, ծով թափելու համար
արդեօք ...:

Յայտնի չէ թէ որպիսի շնորհակալութիւն մատոյց անոր Սիմէոն՝
երբ եկաւ 'ի Սեան. վասնզի աւանդութիւնն կը լռէ զայդ, ինչպէս
կը լռէ նաև կապուտակ լիճն. և միայն կիսակործան ստորերկրեայ
տնակներն, յայտնաբարբառ կը վկայեն, թէ իրենք աւելի կարող են
կրօնաւորներ պահել, քան թէ՛ վանաց յանձնուած գիտութեան այդ
անգին նշխարները:

Մի քանի երկրաշարժներով որք յաճախ և ոսատիկ կերպով կը
պատահին Հայաստանի մէջ, աւերեցան որմունք և ինչ ինչ մասունք
չինուածոյ վերին վանաց, Այն ատեն սկսան խորհուրդ ընել, թէ
պէտք էր կողոյն ստորին մասը փոխադրել 'ի բնակութիւն, որով-
հետև այն երկրաշարժներու ժամանակ այնպիսի բարձրութեան մը
վրայ բնակել շատ անյարմար կ'երևէր զանազան պատճառաց համար.
Վասնզի պէտք կ'ըլլար հեռու տեղէն ջուր, փայտ և ուրիշ կարևոր
բաներ բերել, և այլն, որով և համոզուեցան թէ լաւագոյն է՝ շէնքը
ստորին լճափանց վրայ բարձրացնել, Բայց կարևոր միջոցներ չունե-
նալով՝ դեռ ևս առաջին տեղը մնացին, սպասելով որ Նախախնամու-
թիւնն բարերար մը զրկէ, որ այս օգտակար գործոյս կարենայ
նպաստամատոյց լինել: Յամին 1664 գրեթէ յետ 700 տարի սպա-
սելու, վասն զի առաջին երկրաշարժը 995 թուականին պատահեցր
էր, կրօնաւորաց փափաքը կատարուեցաւ, և անոնց համբերատար
աճկակալութիւնը — յիբաւի մեծ համբերութիւն — վարձատրեցաւ:
Անգամ մը յիշեալ տարին ուխտի գալով հոս երեք տիղիսեցի եղբարք
Զիտախեանք, և տեսնելով տեղոյս համատարած խղճալի աւերածն,
ուզեցին բարեպաշտ գործոյ մը նուիրել իրենց դրամն, ժամանակը
ու վաստակը: Կանգնեցին նորա աւերեալ շինուածներն, և շինեցին
ստորին եկեղեցին և խցիկներն, և միով բանիւ՝ ամենայն ինչ ուղղե-
ցին և կարգաւորեցին, և կնքեցին իրենց բարեգործութիւնը՝ պար-
գեւելով եկեղեցւոյն երեք արծաթեայ բազմաստեղնեան ջահեր, խոս-
տանալով միանգամայն որ տարուէ տարի անվրէպ յուղարկեն նոցա

պէտք եղած իւղն, իսկ կրօնաւորներն անոնց 'ի շնորհակալութիւն' սրբատաշ քարէ մը վրայ փորագրելով նոյա անուանքը, եկեղեցւոյ մտից վրայ ագուցին :

Վերին եկեղեցւոյն չափաւոր մեծութեամբ չէնքը՝ կառուցուած է խորանարդաձև տաշուած, սև և ծակոտկէն հողաքարով, չարտարապետութիւնը պարզ և սովորական է, մանաւանդ թէ, ինչպէս երբեմն սովոր են ըսել՝ և կրօնաւորական ու իսկ սրածայր, ութանկիւնի գմբէթն՝ կը պսակէ բովանդակ խաչաձև շինուածը : Քարէ որմով պատած չորս սիւները՝ վեր բռնելով վրանին պատշաճ յարկածաձք մը, բաղկացեալ մի քանի քառակուսի գերաններէ՝ վրանին ցախ տարածուած, կը ձևադնեն եկեղեցւոյն նախագաւիթը : Սիւներն կը վերջնան փայտեայ խոյակներով, որոց տեսանելի կողմը զարդարուած է այլ և այլ քանդակներով, որք ցորեկ ատեն արևուն պայծառ լուսով որոշ զուրս կը ցատքեն, իրենց գեղեցկութեամբ և ազնութեամբ՝ յայտնի հակապատկեր կազմելով զիրենք վեր բռնող հազիւ տաշուած և անհարթ սեանց հետ : Մուտքին չափաւոր մեծութեամբ դուռն՝ բովանդակ վանքին գանձն և ճոխութիւնն համարուած է : Նորա ամբողջ երեսն՝ առանց ամենին դատարկ տեղ մը թողլու, պաճուճուած է հին ոճոյ հրաշալի փքրիկ փայտեայ քանդակներով, ուր հայկական զարդը, խորհրդաւոր կենդանիներ, ծաղկունք, վերտառութիւնք, սոքա ամէնքը կը տեսնուին անդ՝ մէկ ինքնաստեղծ և գեղեցիկ նկարի վերածուած : Եւ յիշուի այն դուռն այնքան յարգի է հնագիտական տեսութեամբ, որ նոցա ըսածին համեմատ, Ուլարով կոմ.՝ն 600 ուռլի տուեր է անոր փոխարէն, բայց վանահայրն չէ հուշանած : Սոյն դրոսն յարզը գիտնալով, լաւ համարեցայ անոր լուսանկարն ունենալ 'ի յիշատակ, ուստի կանչել տուի մնացեալ բեռնակիրները՝ որք մեր կազմածը կը կրէին :

— « Դեռ ևս եկեղեցին չայցեալ, ըսի ուղեկցացս, նախ օտ ուր վար առնենք » :

— « Ինչո՞ւ վար առնել » — ըսաւ կրօնաւորն չփոթած, վախնալով մեր այնքան բազմութենէն : — « Դուք լաւ ևս կ'ընէիք՝ եթէ պարզ դիտելու լինէիք, վանահայրնիս բնաւ մէկուն թոյլ չի տար զայն վերջընել » : Հանդարտեցնելով չփոթեալ կրօնաւորը, վար առիք՝ դուռը՝ զայն աւելի ևս մտադրութեամբ զննելու նպատակաւ : Եկեղեցւոյս գմբէթն խարխլած լինելով և կործանելու վտանգ ևս սպառնալով, խիտքիչ անգամ կը կատարուին հոն հասարակաց աստուածային պաշտամունքներն : Եկեղեցւոյ ներքին կողմը շատ ալքատ է, բոլոր զարդերը ներկուած փայտերով են . բնաւ ոսկեզօծեալ իր մի կամ մետաղ չի տեսնուիր անդ :

Եկեղեցւոյն բեմին վրայ կառուցուած է քարաչէն սեղանը՝ հանդերձ ամենայն կարևորօքն . իսկ անոր մէջտեղը դրուած է Սրբոյ կուսին

Մարեմայ պատկերն, որոյ անուամբ եկեղեցին ևս օծուած է: Երբ 'ի մօտոյ զայն գիտել սկսանք, հետեւեալ ռուսերէն վերտառութիւնը նըշմարեցինք. Սւօշնէսկեան Սոչրթ Աստուածամօր (կենդանագիր), Յիրաւի նորորինակ տպաւորութիւն մ'ազդեց վրանիս այդ հայրենական նշխարն օտար երկրի մէջ, օտար ասարկաներով շրջապատեալ տեսնելը: — Այցեւած եկեղեցւոյ մօտը՝ կը գտնուին յիշեալ հին եկեղեցւոյ աւերակքն, որոյ շինութիւնը՝ ինչպէս արդէն ըսինք՝ Ս. Գրիգոր Լուսաւորին կ'ընծայի:

Դուրս մնացեալ Մոլոկանք՝ առնելով քովերնիս գտնուած հեռագէտ գործին՝ լծին հակադիր ասիանց վրայ բարձրացած լիւր կը դիտէին:

— « Ինչպէս, մեր դայտերն ալ կը տեսնուին », հարցուց անոնց մէմէկն՝ նայողին դառնալով:

— « Պէտք է որ տեսնուին. կեցիր նայիմ »:

Իսկոյն ամէնքն ալ չորս կողմը ժողվելով՝ հետաքրքրութեամբ կը սպասէին:

— « Այ ամպարիշտ », աղաղակեց կատաղաբար դիտողը: « Մեր գրացի անիծեալ ֆիւրդը՝ թողուցեր է ուղտերը որ մեր խոտը ուտեն: Ահա ինչ արագութեամբ խոտերուն դէզը կը քակեն: Այ ա. նիրաւ, երբ դառնանք՝ պիտի առնուիք քեզմէ արդար վրէժնիս »: Այս յանկարծական լուրը զամէնքն ալ ելեկարացուց. իսկոյն իրարու ձեռքէ կորզելով փոքրիկ գործին՝ սկսան դիտել տասն մղճիւ չափ հեռի կատարուած աւարառութիւնը. և զայրութի և սքանչանաց բարձրագոյ աղաղակներով՝ ականջնիս տարին: — Երախտագէտ շընորհակալութեամբ մեզ զարձնելով զգործին, այն օրէն ճանչցան Մոլոկանք՝ անոր տեսութեան մատակարարած օգտակար նպաստը՝ որ իրենց մի այնպիսի անակնունելի ծառայութիւն րուս:

Ստորին եկեղեցին համեմատութեամբ շատ աւելի մեծ է, և աւելի ճոխ և զարդարուն: Դեռ ևս դար մ'անցած չըլլալով իւր շինութեան վրայ, և մի քանի անգամ ալ նորոգուած լինելով՝ ներկայապէս բոլորովին չէն և կանգուն է, և ինչպէս կը տեսնուի՝ աւերելու նշան մ'ալ չկայ: Ներքսպէս ամենեկին չի տարբերիւր ուրիշ Հայոց եկեղեցիներէն: Սորա միջատեղն գրաւած է սեղանը, որոյ ալ և ձախ կողմերը կան մի մի երկրորդական սեղանք, քանդակազարդ դուռը և մանրանկար փայտերով պճնազարդ գմբէթն. ահա ամբողջ եկեղեցւոյն բովանդակութիւնը:

Պատմական հնութիւնքը յաւանդատան կը պահուին, զորս ինքնին Վանահայրը մեզ ցուցուց, խնամքով դուրս հանելով իւրաքանչիւր աւանդները՝ իրենց յատուկ ծրարներէն կամ տուփերէն, և պանծանօք առջևնիս դնելով: Անոնց մէջ կը գտնուէր երկաթեայ խաչ մը, զոր՝ ըստ աւանդութեան՝ թաղէոս առաքեալն շինած է ա.

ուանց հրոյ և լուկ ձեռքով, այն կոնքէն, յորում Ս. Կոյսն իւր առտուածային Մանկիկը կը լուանայր: Ուրիշ խաչ մ'ալ տեսանք, ո. բուն ծայրը մեծ և թափանցիկ քար մը կար. և անոր գոյնն՝ իբրև թէ պատերազմի ժամանակ կը կարմրի. իսկ ժանտախտի միջոց կը սևանայ. Դարձեալ սրբոց առաքելոցն Պետրոսի և Պողոսի մասունքը զետեղուած տփի մը մէջ, որ կը ներկայացնէր արծաթէ շինուած երկու մարդու երես՝ ծոճրակներով իրարու հետ միացած, և ուրիշ շատեր:

Եկեղեցին և աւանդատունն իրարու հետ անձուկ և մթին սրահակով մի կը միանան, որոյ երկու կողմը կրօնաւորաց և ապաշխարողաց խցիկներուն դռները կային: Առաջին կարգի չափաւոր մեծութեամբ խցիկներն՝ որք վրայէն մէկ մէկ պատուհան ունին, մութ են և ապրելու բոլորովին անյարմար: Անոնց իւրաքանչիւրին մէջ երկերկու հոգի կը բնակին, որպէս զի՝ ինչպէս կրօնաւորներն կ'ըսեն՝ ձմեռը շատ ցուրտ չըլլայ: «Հոս փայտը շատ թանկ է, ըսին, ուստի և խիստ քիչ անգամ կրակ կը վառենք»: Արգելականաց բնակարանքը՝ սարսափելի են. փոքրիկ ստորերկրեայ սենեակը՝ հազու նշմարելի պատուհան մ'ունին որ ուրիշ բան չէ, բայց եթէ ձագարածն ծակ մը վարէն մինչև գետնին երեսը, որոյ վրայ երկաթեայ վանդակապատ մ'ալ կայ, խոնաւ, ցուրտ, բնաւ կահ կարասի մը չկայ. ուր արգելականին բովանդակ ճոխութիւնն է՝ քար մը ՚ի պատուանդան ջրոյ անօթոյն, ջրոյ անօթն, գիրկ մը յարդ և կտոր մը հաց: Հաստ փայտեայ դուռ մը կ'անջատէ զինքը աշխարհէն, որոյ հետ ուրիշ հաղորդակցութիւն չունի բաց ՚ի տեսութենէ կրօնաւորին, որ երբեմն յիշեալ պատուհանէն՝ կամ լաւ ևս ըսել ծակէն վար կը նայի զանիկոյ մը խիթարելու համար: Աստ յիրաւի պահք պահել բառին ամբողջ մաստն գործով կատարելէ յետոյ, ամբողջ ժամանակին կ'անցնէին ապաշխարելով և մեղքերին մտածելով: Այժմ, ըստ ասելոյ փակակալին, տոյն խցիկներս դատարկ են. և միայն, ինչպէս վենետկոյ Դոմքսերու պալատան ներքև գտնուած ահաւոր, աղջամղջին և կիսով չափ ծովասոյգ բանտերն, Հռովմայ Մամբրտեան կոյուածներն և Շիրոնի զոզկի միջի արգելատունքը, կը ծառայեն ուղիոր հասարակութեան հետաքրքրութիւնը գոհացնելու համար: Իսկ այժմ, աստ փորձուելու զրկուած կրօնաւորքը՝ երկու պարտաւորութենէ դուրս, որք են՝ ամէն կատարուած աստուածային պաշտամանց ներկայ գտնուիլ և կղզիէն բնաւ չհեռանալ, բոլորովին ըստ ամենայնի ազատ են:

Վերջապէս երեկոյեան դէմ, երբ լմնցուցնիք մեր այցելութիւնը և ստացանք լիովին մեր փափաքած տեղեկութիւնքը, մի և նոյն նաւով որով եկեր էինք՝ մեկնեցանք Սև-վանքէն: